ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 հունվարի 2022 թվականի N 14

## ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ԳՅՈՒՂԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՅՄԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, հաշվի առնելով «ԳՈՎԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի դիմումը (մուտք՝ 2022 թվականի հունվարի 12-ի N Տ-13).

1. Ձևակերպել Աբովյան համայնքի Վերին Պտղնի գյուղի 3-րդ փողոցի 1-ին նրբանցքի թիվ 2 հասցեում գտնվող մշակույթի տան կառուցման շահագործման թույլտվությունը (շահագործման թույլտվությունը կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Է. ԲԱԲԱՅԱՆ**

2022թ. հունվարի 14
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ, ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ

# ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏ (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ)

**N 02 «14» հունվարի 2021թ.**

Կառուցապատող *ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ +37460536428* կողմից
(իրավաբանական անձի անվանումը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

կառուցված ***Մշակույթի տուն***
(օբյեկտի անվանումը)

որը գտնվում է ***համայնք Արովյան, Վերին Պտղնի գյուղ, 3-րդ փողոց ,1-ին նրբանցք, 2 հողամաս*** հասցեում՝
( օբյեկտի տեղադրությունը, հասցեն)

համարվում է ավարտված և պատրաստ է շահագործման, որի՝

1. նախագծային փաստաթղթերը մշակվել են *«ԿՈՏԱՅՔՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ* կողմից
(նախագծային կազմակերպության անվանումը, օրենքով սահմանված դեպքում՝ լիցենզիայի համարը, անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, լիցենզիայի համարը)

2. շինարարությունն սկսվել է ***Վերին Պտղնի համայնքի ղեկավարի*** կողմից
(շինարարության թույլտվություն տվող մարմնի անվանումը)

տրված ***18.09.2020 թ. N 11*** շինարարության թույլտվության համաձայն.

3. շինարարությունն իրականացվել է ***«ԳՈՎԱ» ՍՊԸ*** կողմից
( գլխավոր կապալառուի անվանումը)

4. օբյեկտի հիմնական ցուցանիշներն են՝ ***431.52 քմ մակերեսով մշակույթի տուն***

5. հատուկ պայմանները ***ոչ էական շեղումներով***

Հիմքեր՝

1) կառուցապատողի դիմումը՝ ***12/01/2022 թ***.

2) ընդունող հանձնաժողովի ակտը՝ ***22/12/2021թ .***

3) կատարողական փաստաթղթերի ցանկը՝ -- թերթ:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Է. ԲԱԲԱՅԱՆ**

«14» հունվարի 2021 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 հունվարի 2022 թվականի N 12

## ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 07-Ի N 1594 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, հաշվի առնելով «ՎՈԼԻՈՍ նախագծային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության գրությունը (մուտք՝ 2021 թվականի դեկտեմբերի 21-ի N S-717).

1. Աբովյան համայնքի ղեկավարի 2021 թվականի դեկտեմբերի 07-ի ««Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը Աբովյան քաղաքի էդ. Պետրոսյան փողոցի թիվ 1/43 հասցեում էլեկտրամատակարարման շինարարության թույլտվություն տալու մասին» N 1594 որոշման վերնագրում, 1-ին կետում և որոշմամբ տրված N ԷԼ-38 շինարարության թույլտվության մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ «1/43» թիվը փոխարինել «1/43/3» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ

2022թ. հունվարի 13
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 հունվարի 2022 թվականի N 11

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ ԴԱՐԱՆԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 4/4 ՀԱՍՑԵՈՒՄ ԷԼԵԿՏՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, հաշվի առնելով «ՎՈԼԻՈՍ նախագծային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության գրությունը (մուտք՝ 2021 թվականի դեկտեմբերի 30-ի N S-737).

1.Համաձայնություն տալ «ՎՈԼԻՈՍ նախագծային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությանը Աբովյան քաղաքի Դարանի փողոցի թիվ 4/4 հասցեում գտնվող Աննա Ապերյանին պատկանող տարածքի 0,4 ԿՎ հզորությամբ էլեկտրամատակարարման մալուխային գիծը նախագծել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից տրված N 71316111 (6633-ԷՄ) տեխնիկական պայմանի ուղեգծով և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրել էլեկտրամատակարարման շինարարության թույլտվություն (շինարարության թույլտվությունը կցվում է):

2.«Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը պարտավոր է Աբովյանի համայնքապետարանի 900105201454 հաշվեհամարին մուծել 45 000 (քառասունհինգ հազար) դրամ տեղական տուրք՝ շինարարության թույլտվության համար:

3.Շինարարական աշխատանքները կատարելիս անհրաժեշտ է տեղեկացնել «Աբովյանի համայնքային կոմունալ տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը, Հայաստանի Հանրապետության ոստիկանության Կոտայքի ճանապարհային ոստիկանությանը և մյուս շահագրգիռ կազմակերպություններին:

4. Քանդված տարածքի հատվածները վերականգնել տասնհինգօրյա ժամկետում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Է. ԲԱԲԱՅԱՆ**

2022թ. հունվարի 13
ք. Աբովյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ**

**ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ N ԷL-01**

**«13» հունվարի 2022թ.**

Տրված է կառուցապատող **«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԲԸ**-ին՝

**N 20122017-07-0061, ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Դարանի փողոցի, թիվ 4/4 հասցեում**

(վկայականի համարը, գտնվելու վայրը, հողամասի գտնվելու վայրը)

**էլեկտրամատակարարման** օբյեկտի

(օբյեկտի անվանումը, հակիրճ բնութագիրը, հիմնական ցուցանիշները)

**կառուցման** արդիականացման աշխատանքների կատարման համար:

1. Գծային ինժեներական ենթակառուցվածքների ստեղծման (արդիականացման) հետագիծ-նախագծային փաստաթղթերը մշակվել են **«Աշխատանքային նախագիծ»**

(Նախագծային փաստաթղթերի փուլը,

**«ՎՈԼԻՈՍ նախագծային ինստիտուտ» ՓԲԸ** կողմից:

նախագծային աշխատանքների կապալառուի անվանումը, լիցենզիայի համարը)

2. Շինարարական աշխատանքներն իրականացնել **6 ամիս** ընթացքում:

(Նշել շինարարության նորմատիվային տևողությունը)

3. Հատուկ պայմաններ՝

1) կառուցապատողը, նախքան շինարարությունն սկսելը, ինչպես նաև դրա ընթացքում, պարտավոր է հասցվելիք վնասների փոխհատուցման համար համաձայնության գալ կառուցապատման հետևանքով վնասներ կրող սուբյեկտների հետ.

2) շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետներում կառուցապատումը չավարտելու դեպքում գործում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման N 1 հավելվածի 123-126-րդ կետերով սահմանված պահանջները:

4. Թույլտվության հիման վրա ցանկացած շինարարական և զուգահեռ աշխատանք կարող է իրականացվել բացառապես Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, նախագծային փաստաթղթերին և նորմատիվ-տեխնիկական պահանջներին համապատասխան:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԷԴՈՒԱՐԴ ԲԱԲԱՅԱՆ**

Կ.Տ.

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ... 03502...

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ Ու Մ

13 հունվարի 2022 թվականի N 10

## ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ ՀԱՏԻՍԻ ՓՈՂՈՑԻ 4-ՐԴ ՆՐԲԱՆՑՔԻ ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ՀԱՆՐԱԿԱՑԱՐԱՆԻ ԹԻՎ 415 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 45-րդ, 50-րդ, 51-րդ, 55-րդ և 62-րդ կետերի և հաշվի առնելով Վիկտորյա Պողոսյանի դիմումը (մուտք՝ 2021 թվականի դեկտեմբերի 22-ի N Ք-3772).

1. Վիկտորյա Պողոսյանին պատկանող (հիմք՝ 2021 թվականի դեկտեմբերի 20-ի անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր՝ գրանցված Կոտայքի մարզ նոտարական տարածքի նոտարի գրանցամատյանում՝ N 12064) Աբովյան քաղաքի Հատիսի փողոցի 4-րդ նրբանցքի Ճարտարագիտական քոլեջի հանրակացարանի թիվ 415 բնակարանը վերահասցեավորել՝ քաղաք Աբովյան, Ուսանողական թաղամաս, 4 շենք, 415 բնակարան:

2. Վիկտորյա Պողոսյանը պարտավոր է Աբովյանի համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին մուծել 5 000 (հինգ հազար) դրամ՝ հասցեի տրամադրման ծառայության վճար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Վիկտորյա Պողոսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ

2022թ. հունվարի 13
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 հունվարի 2022 թվականի N 09

## ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԱՌՆԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1 ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 30-ի N 1855-Ն որոշման և հաշվի առնելով Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության բաժնի պետի զեկուցագիրը (մուտք՝ 2022 թվականի հունվարի 07-ի N Ք-26).

1. Հաստատել Աբովյան համայնքի Գառնի փողոցի թիվ 1 բազմաբնակարան շենքի պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ 1210.6 քառակուսի մետր մակերեսով հողամասի՝ «ԷՅ ԷՄ ԹԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2021 թվականի դեկտեմբերի 18-ին կազմված հատակագիծը (կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ

2022թ. հունվարի 13
ք. Աբովյան

Ձև 1

# ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

| | |
|---|---|
| Աբովյան համայնք | |
| անուն ազգանուն | |

Կոտայքի մարզ, Աբովյան համայնք, Գառնի 1 շենք

Մարզ, համայնք, հասցե

Հողահատկացման հիմքը

Հաստատում եմ 19. 01.2022 թ.

Համայնքի ղեկավար Կ.Տ.

անուն, ազգանուն, հայրանուն




| | |
|---|---|
| Մակերես հա | 0.12106 հա |
| Ծածկագիր | 07-002-0082-0181 |
| Նպատակային նշանակություն | Բնակավայրերի |
| Գործառնական նշանակություն | Բնակելի կառուցապատման |

*Լրացուցիչ նշումներ.*

Հողամասի

| Շրջադարձային (բեկման) կետեր | Կոորդինատներ X | Կոորդինատներ Y | Գծային չափերը (մ) |
|---|---|---|---|
| 1 | 4459568.29 | 8468128.43 | |
| | | | 1.73 |
| 2 | 4459568.72 | 8468130.11 | |
| | | | 0.40 |
| 3 | 4459569.11 | 8468130.02 | |
| | | | 7.31 |
| 4 | 4459571.10 | 8468137.05 | |
| | | | 1.50 |
| 5 | 4459572.51 | 8468136.56 | |
| | | | 1.38 |
| 6 | 4459572.89 | 8468137.89 | |
| | | | 1.83 |
| 7 | 4459574.65 | 8468137.40 | |
| | | | 49.47 |
| 8 | 4459587.98 | 8468185.04 | |
| | | | 0.64 |
| 9 | 4459588.60 | 8468184.86 | |

Մասշտաբ 1:1000

| | | |
|---|---|---|
| Որակավորում ունեցող անձ | | Արայիկ Ավագյան |
| Որակավորման վկայականի համարը | | 0407 |
| Ստորագրություն | | |
| Իրավաբանական անձի անվանումը | | <<Է3 ԷՄ ԹԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ>> ՍՊԸ |
| ՀՎՀՀ | | 03550425 |
| Ստորագրություն | | |
| ամիս ամսաթիվ | չափագրության | 15.12.2021 |
| | հատակագծի կազմման | 18.12.2021 |

Կ.Տ.

| Բազմաբնակարան բնակելի շենքի սպասարկման տարածք | | | |
|---|---|---|---|
| Շրջադարձային (բեկման) կետեր | Կոորդինատներ | | Գծային չափերը (մ) |
| | X | Y | |
| 1 | 4459568.29 | 8468128.43 | 1.73 |
| 2 | 4459568.72 | 8468130.11 | 0.40 |
| 3 | 4459569.11 | 8468130.02 | 7.31 |
| 4 | 4459571.10 | 8468137.05 | 1.50 |
| 5 | 4459572.51 | 8468136.56 | 1.38 |
| 6 | 4459572.89 | 8468137.89 | 1.83 |
| 7 | 4459574.65 | 8468137.40 | 49.47 |
| 8 | 4459587.98 | 8468185.04 | 0.64 |
| 9 | 4459588.60 | 8468184.86 | 9.30 |
| 10 | 4459591.12 | 8468193.81 | 16.84 |
| 11 | 4459574.92 | 8468198.39 | 0.82 |
| 12 | 4459574.72 | 8468197.60 | 0.41 |
| 13 | 4459574.32 | 8468197.71 | 9.75 |
| 14 | 4459571.75 | 8468188.31 | 1.70 |
| 15 | 4459570.11 | 8468188.77 | 50.35 |
| 16 | 4459556.23 | 8468140.37 | 0.52 |
| 17 | 4459556.73 | 8468140.23 | 6.88 |
| 18 | 4459554.86 | 8468133.61 | 2.85 |
| 19 | 4459557.60 | 8468132.81 | 5.19 |
| 20 | 4459562.64 | 8468131.60 | 1.86 |
| 21 | 4459562.20 | 8468129.80 | 6.25 |
| 1 | 4459568.29 | 8468128.43 | |

| 1. | | | |
|---|---|---|---|
| Շրջադարձային (բեկման) կետեր | Կոորդինատներ | | Գծային չափերը (մ) |
| | X | Y | |

| 2. | | | |
|---|---|---|---|
| Շրջադարձային (բեկման) կետեր | Կոորդինատներ | | Գծային չափերը (մ) |
| | X | Y | |

| 3. | | | |
|---|---|---|---|
| Շրջադարձային (բեկման) կետեր | Կոորդինատներ | | Գծային չափերը (մ) |
| | X | Y | |

| 4. | | |
|---|---|---|
| Շրջադարձային (բեկման) կետեր | Կոորդինատներ | Գծային չափերը (մ) |

| | | |
|---|---|---|
| Որակավորում ունեցող անձ | | Արայիկ Ալավերդյան |
| Որակավորման վկայականի համարը | | 0407 |
| Ստորագրություն | | |
| Իրավաբանական անձի անվանումը | | <<ԷՅ-ԷՄ-ԹԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ>> ՍՊԸ |
| ՀՎՀՀ | | 03550425 |
| Ստորագրություն | | |
| ամիս ամսաթիվ | չափագրության | 15.12.2021 |
| | հատակագծի կազմման | 18.12.2021 |

Կ.Տ.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵ

### ՎԿԱՅԱԿԱՆ N 0407

ՍՈՒՅՆ ՎԿԱՅԱԿԱՆԸ ՏՐՎՈՒՄ Է

ԱՐԱՅԻԿ ՀԱՅԿԱԶԻ ԱԼԱՎԵՐԴՅԱՆԻՆ



առ այն, որ նա մասնակցել է
քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և
հողաշինարարության գործունեության բնագավառում
մասնագիտական որակորման ստուգմանը:
Համաձայն Կադաստրի կոմիտեի ղեկավարի՝
<<02>> մարտի 2021 թ., թիվ 48-Ա հրամանի ստացել է

**ՔԱՐՏԵԶԱԳՐՈՂԻ, ԳԵՈԴԵԶԻՍՏԻ, ՉԱՓԱԳՐՈՂԻ (ՀԱՇՎԱՌՈՂԻ), ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ**

Կադաստրի
կոմիտեի ղեկավար

Կ.Տ.

---------------------------------------- Ս. Թովմասյան

02 մարտի 2021թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 հունվարի 2022 թվականի N 08

## ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Ընտանեկան օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ մասի.

1. Հաստատել Աբովյան համայնքի ղեկավարին կից Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Է. ԲԱԲԱՅԱՆ**

2022թ. հունվարի 13
ք. Աբովյան

Հավելված

Աբովյան համայնքի ղեկավարի 2022 թվականի
հունվարի 13-ի N 08 որոշման

## ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ

| N | Անունը ազգանունը | Պաշտոնը |
|---|---|---|
| 1. | Ջանինա Սարգսյան | Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ - նախագահ |
| 2. | Գոհար Պողոսյան | «Աբովյանի N 7 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հոգեբան - անդամ |
| 3. | Ալվարդ Սարգսյան | «Աբովյանի երեխաների աջակցության կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն - անդամ |
| 4. | Սերգեյ Գալուստյան | ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Կոտայքի բաժնի անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման բաժանմունքի պետ, ոստիկանության մայոր - անդամ |
| 5. | Կարինե Կարապետյան | Աբովյանի սոցիալական աջակցության տարածքային գործակալության առաջատար մասնագետ - անդամ |
| 6. | Կոմիտաս Գրիգորյան | Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի սոցիալական ծրագրերի, տեղեկատվության և գործավարության բաժնի գլխավոր մասնագետ - անդամ |
| 7. | Լևոն Շառաջյան | Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի առաջատար մասնագետ - անդամ |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 հունվարի 2022 թվականի N 07

## «ԱԶԱՏ ՇԱՀՈՅԱՆ ՕՍԵՊԻ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի N 843-Ն որոշման, հիմք ընդունելով «Ազատ Շահոյան Օսեպի» անհատ ձեռնարկատիրոջ հայտը (մուտք՝ 2022 թվականի հունվարի 05-ի N Ք-22).

1. «Ազատ Շահոյան Օսեպի» անհատ ձեռնարկատիրոջը տալ 2022 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Աբովյան քաղաքի 1-ին միկրոշրջանի թիվ 8/60/1 հասցեում գտնվող 39.25 քառակուսի մետր մակերեսով սպասարկման օբյեկտում ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվություն (Թույլտվություն N 03 կցվում է):

2. «Ազատ Շահոյան Օսեպի» անհատ ձեռնարկատերը պարտավոր է Աբովյանի համայնքապետարանի 900105201074 հաշվեհամարին վճարել տեղական տուրք՝ 42 000 (քառասուներկու հազար) դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Ազատ Շահոյան Օսեպի» անհատ ձեռնարկատիրոջը որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Է. ԲԱԲԱՅԱՆ**

2022թ. հունվարի 12
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱԲՈՎՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

---

## ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ N ՈԱԽԾ - 03

## *ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

Տրված՝ ***12 հունվարի 2022թ.***

Վաճառքի կամ իրացման թույլատրված ապրանքի անվանումը՝ ***Ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք:***

Հայտատու իրավաբանական անձի լրիվ անվանումը, կազմակերպաիրավական ձևը և գտնվելու վայրը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը և գտնվելու վայրը, հարկ վճարողի հաշվառման համարը՝
***«Ազատ Շահոյան Օսեպի» անհատ ձեռնարկատեր, ՀՀ, Կոտայքի մարզ գ. Առինջ 9 փ. 17 տ., ՀՎՀՀ՝ 43055612:***

Գործունեության տեսակի իրականացման վայրը՝ ***ՀՀ, Կոտայքի մարզ ք. Աբովյան 1-ին մ/շ թիվ 8/60/1, սպասարկման օբյեկտ:***

Շինության տեսակը՝ ***հիմնական շինություն:***

Թույլտվության գործողության ժամկետը՝ ***01 հունվարի 2022թ.***-ից մինչև ***01 հուլիսի 2022թ.***-ը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԷԴՈՒԱՐԴ ԲԱԲԱՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 հունվարի 2022 թվականի  N 06

## «ՆՈՒԲԱՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ ՀԱԿՈԲԻ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի N 843-Ն որոշման, հիմք ընդունելով «Նուբար Մուրադյան Հակոբի» անհատ ձեռնարկատիրոջ հայտը (մուտք՝ 2022 թվականի հունվարի 05-ի N Ք-21).

1. «Նուբար Մուրադյան Հակոբի» անհատ ձեռնարկատիրոջը տալ 2022 թվականի առաջին եռամսյակի ընթացքում Աբովյան քաղաքի Հատիսի փողոցի թիվ 1/77/1 հասցեում գտնվող 74.83 քառակուսի մետր մակերեսով խանութում ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվություն (Թույլտվություն N 02 կցվում է):

2. «Նուբար Մուրադյան Հակոբի» անհատ ձեռնարկատերը պարտավոր է Աբովյանի համայնքապետարանի 900105201074 հաշվեհամարին վճարել տեղական տուրք՝ 27 000 (քսանյոթ հազար) դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Նուբար Մուրադյան Հակոբի» անհատ ձեռնարկատիրոջը որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Է. ԲԱԲԱՅԱՆ**

2022թ. հունվարի 12
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱԲՈՎՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

---

# ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ N ՈԱԽԾ - 02

## *ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

Տրված՝ ***12 հունվարի 2022թ.***

Վաճառքի կամ իրացման թույլատրված ապրանքի անվանումը՝
***Ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք:***

Հայտատու իրավաբանական անձի լրիվ անվանումը, կազմակերպաիրավական ձևը և գտնվելու վայրը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը և գտնվելու վայրը, հարկ վճարողի հաշվառման համարը՝
***«Նուբար Մուրադյան Հակոբի» անհատ ձեռնարկատեր, ՀՀ Կոտայքի մարզ ք. Աբովյան Ռոսիայի փողոց շ. 8 բն. 10, ՀՎՀՀ՝ 82410321:***

Գործունեության տեսակի իրականացման վայրը՝ ***ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Աբովյան Հատիսի փողոց թիվ 1/77/1, խանութ:***

Շինության տեսակը՝ ***հիմնական շինություն:***

Թույլտվության գործողության ժամկետը՝ ***01 հունվարի 2022թ.***-ից մինչև ***01 ապրիլի 2022թ.***-ը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԷԴՈՒԱՐԴ ԲԱԲԱՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 հունվարի 2022 թվականի N 05

## «ՄԱՅՐԱՆՈՒՇ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՊԱՐԳԵՎԻ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի N 843-Ն որոշման, հիմք ընդունելով «Մայրանուշ Հովհաննիսյան Պարգևի» անհատ ձեռնարկատիրոջ հայտը (մուտք՝ 2022 թվականի հունվարի 05-ի N Ք-20).

1. «Մայրանուշ Հովհաննիսյան Պարգևի» անհատ ձեռնարկատիրոջը տալ 2022 թվականի առաջին եռամսյակի ընթացքում Աբովյան քաղաքի Էլարի փողոցի թիվ 16 հասցեում գտնվող 38.95 քառակուսի մետր մակերեսով խանութում ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվություն (Թույլտվություն N 01 կցվում է):

2. «Մայրանուշ Հովհաննիսյան Պարգևի» անհատ ձեռնարկատերը պարտավոր է Աբովյանի համայնքապետարանի 900105201074 հաշվեհամարին վճարել տեղական տուրք՝ 21 000 (քսանմեկ հազար) դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Մայրանուշ Հովհաննիսյան Պարգևի» անհատ ձեռնարկատիրոջը որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ

2022թ. հունվարի 12
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱԲՈՎՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

---

# ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ N ՈԱԽԾ - 01

## *ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ*

Տրված՝ ***12 հունվարի* 2022թ.**

Վաճառքի կամ իրացման թույլատրված ապրանքի անվանումը՝
***Ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք:***

Հայտատու իրավաբանական անձի լրիվ անվանումը, կազմակերպաիրավական ձևը և գտնվելու վայրը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը և գտնվելու վայրը, հարկ վճարողի հաշվառման համարը՝
***«Մայրանուշ Հովհաննիսյան Պարգևի» անհատ ձեռնարկատեր, ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան Էլարի փ. տուն 22, ՀՎՀՀ՝ 43081471:***

Գործունեության տեսակի իրականացման վայրը՝ ***ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան Էլարի փ. թիվ 16:***

Շինության տեսակը՝ ***հիմնական շինություն:***

Թույլտվության գործողության ժամկետը՝ ***01 հունվարի 2022թ.***-ից մինչև ***01 ապրիլի 2022թ.***-ը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԷԴՈՒԱՐԴ ԲԱԲԱՅԱՆ**

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ... * 03502073 *